

АРМЕНОВЕДЕНИЕ

DOI 10.24412/1829-0485-2026-1-210-234
УДК 358.2

Поступила: 17.07.2025г.
Сдана на рецензию: 27.07.2025г.
Подписана к печати: 09.10.2025г.

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԸ ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԵՎ ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԵՐՈՒՄ

Լ. Ս. Սարվազյան

*ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ
Ռուս-Հայկական համալսարան
lilit.sarvazyan@gmail.com
ORCID: 0000-0001-8925-3052*

ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում մեկնաբանվում է իշխանությունների բաժանման սկզբունքը միջնադարյան հայ իրավունքի երկու հիմնարար աղբյուրներում՝ Մխիթար Գոշի «Գիրք Դատաստանի» աշխատության մեջ և Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքում»: Հայ իրավաբանական մտքի ականավոր ներկայացուցիչները մշակել են ազգային ինքնիշխանության և պետության ինքնիշխանության (սուվերենիտետի) ուրույն հայեցակարգ, որը համապատասխանում էր հայ ժողովրդի ազգային գաղափարախոսությանը, ազգային-ազատագրական պայքարի պահանջներին և անկախ պետականության վերաստեղծման ու պահպանման նպատակին: Այս համատեքստում հայ մտածողները մեկնաբանում են իշխանությունների տարանջատման սկզբունքը մի քանի մակարդակի վրա՝ սահմանելով հոգևոր և աշխարհիկ իշխանությունների, ինչպես նաև սոցիալական տարբեր դասերի իրավունքներն ու պարտականությունները պետական կառավարման համակարգում: Նրանց նպատակը հայոց պետության իրավակարգի ձևավորումն էր, պետական (ազգային) անվտանգությունը, ազգային միասնությունը և սոցիալական ներդաշնակությունը: Այս նպատակի իրականացումը հնարավոր էր համարվում ազգային կամ պետական գերատեսչությունների գործունեության մեջ ներկայացուցչության, խորհրդակցական կառավարման, օրինականության, լեգիտիմության, արդարադատության, ժողովուրդ-իշխանություն փոխհամաձայնության սահմանադրաիրավական սկզբունքների կիրառ-

մամբ, որոնց կարևորությունը հայ հասարակության մեջ գնահատվել է դեռևս Վաղ միջնադարում և գործադրվել Ազգային-եկեղեցական ժողովներում: Հավատարիմ մնալով ազգային իրավաբանական մշակույթի արժեհամակարգին՝ Մխիթար Գոշը և Սմբատ Սպարապետը Դատաստանագրքերում ամրագրել են նաև բազմաստիճան դատական համակարգի սահմանադրությունները՝ հանուն ազգային դատական ինքնավարության և արդարադատության հաստատման:

Հիմնաբառեր՝ իշխանությունների տարանջատման սկզբունք, ազգային քաղաքական համակարգ, Մխիթար Գոշ, «Գիրք Դատաստանի», քաղաքական ինքնորոշում, Սմբատ Սպարապետ, սահմանափակ միապետություն, արդարադատություն:

Ներածություն

Պետական իշխանությունների ձևավորման սահմանադրական սկզբունքները, այդ թվում՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը հռչակված են իրավական պետությունների սահմանադրություններում և Հայաստանի Հանրապետության գործող Սահմանադրությունում. «Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությամբ և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա» [1]: Հարկ է նշել, որ այս սկզբունքը որոշակի բովանդակությամբ արտացոլված է հայ իրավունքի առավել վաղ ստեղծված աղբյուրներում:

Ազգային պատմության հետազոտության արդյունքում բացահայտվել է հայ ազգի ինքնակառավարման բացառիկ ունակությունը, որը գնահատվել է որպես «Էթնիկ նախաստեղծ հատկանիշ» [2], ինչով պայմանավորվել է հայոց ազգության ու պետականության լինելիությունը: Այս հատկանիշով ազգը կայացել է որպես միասնական քաղաքական անհատականություն և քաղաքակրթության սուբյեկտ: Հայոց ինքնակառավարման ունակությունը դրսևորվել է Աշխարհաժողովներում (Աշտիշատի /354/, Շահապիվանի /444/, Աղվենքի /488/, Դվինի /506, 508/, Պարտավի /768/ և այլն), որտեղ ազգի աշխարհիկ ու հոգևոր ներկայացուցիչները խորհրդակցել, քննարկել և ընդհանուր համաձայնությամբ լուծել են համազգային խնդիրներ¹: Աշխարհաժողովները նշանավորել են հայոց ազգային քաղաքական և իրավական մշակույթի բարձր մակարդակը:

¹ Աշխարհաժողովներում կիրառված սահմանադրական սկզբունքների վերաբերյալ տե՛ս՝ Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն (Թարգմ. և ծանոթ.՝ Ստ. Մալխասյանցի), Եր., 1987, էջ 119: Մովսես Խորենացի, Հայոց պատմություն (Աշխարհ. թարգմ. և մեկնաբ.՝ Ստ. Մալխասյանի), Եր., 1981, էջ 336: Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի (Թարգմ., առաջ. և ծանոթագր.՝ Վ. Առաքելյանի),

Ժողովների միջոցով խնդիրներ լուծելու ավանդույթը ձևավորվել է դեռևս Ք.ա. III հազարամյակում Հայկական Արատտա երկրամասում: Ըստ շումերական հնագույն արձանագրությունների՝ Արատտայում դեկավարել են «գերագույն քուրմ» տիտղոսը կրող կառավարիչները, ովքեր պետական կարևորագույն հարցերը լուծել են «...ավագների ժողովի հետ խորհրդակցելով» [3]: Խորհրդակցական սկզբունքը, որի կիրառությունը նպաստել է նաև իշխանությունների բաժանման սկզբունքի իրացմանը, ժառանգորդվել է գործադրվել է Արարատյան թագավորության (Ուրարտուի) պետական համակարգում, ինչպես նաև հայոց թագավորության հետագա պատմաշրջաններում:

Հողվածում կոնկրետ-պատմական և պատմահամեմատական մեթոդաբանական սկզբունքներով մեկնաբանվում են պետական-վարչական իրավանդումներն ու բազմաստիճան դատական համակարգը Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի Դատաստանագրքերում, որոնցում բացահայտվում է իշխանությունների բաժանման ու համագործակցության սկզբունքի կիրառման նշանակությունը Հայաստանում և Կիլիկյան Հայկական թագավորությունում:

Դատաստանագրքերի ստեղծումը պայմանավորված էր XII–XIII դարերի պատմաիրավական ու քաղաքական իրողություններով: Բուն Հայաստանում և Կիլիկիայում հայ ժողովուրդն ազգային-ազատագրական պայքար էր մղում՝ վերականգնելու քաղաքական անկախությունն ու ազգային պետականությունը: Ուստի՝ Գոշի «Դատաստանագիրքը» կազմվեց որպես հայկական ապագա պետության օրենսգիրք, Իսկ Սմբատի «Դատաստանագիրքը»՝ որպես արդեն կայացած պետության՝ Կիլիկյան Հայաստանի գործող օրենսգիրք:

Մխիթար Գոշը (մոտ. 1120/1130–1213թթ.) միջնադարյան հայ իրավաքաղաքական մտքի խոշորագույն ներկայացուցիչն է, փիլիսոփա, աստվածաբան, օրենսդիր, եկեղեցական և հասարակական-քաղաքական գործիչ, մանկավարժ: Նրա օրենսդրական գործունեության հիմքում Հայաստանի ինքնիշխան, կենտրոնացված պետականության, ազգի քաղաքական ինքնորոշման ու ինքնակառավարման գաղափարներն են, որոնց իրականացումը ենթադրում էր մի շարք հիմնահարցերի լուծում. ներագային ուժերի համախմբում, տեղական իշխանությունների համագոր-

Եր., 1969, 65–69: Կանոնք Շահապիվանի // «Կանոնագիրք Հայոց», Մաս Ա (Աշխատասիրությամբ՝ Վ. Հակոբյանի), Եր., 1964, էջ. 423–465: Աշտիշատի ժողովին վերագրվող կանոնները // Ռ. Ավագյան. Հայ իրավական մտքի գանձարան, Գիրք 1, Եր., 2001, էջ. 106–110: Վաչագան թագավորի Մահմանադրությունը, Եր., 2010:

ծակցում, անջատողական-կենտրոնախույս քաղաքականության չեզոքացում, արդարության սկզբունքով միջոցասային հակասությունների մեղմում, սոցիալական ներդաշնակության հաստատում, հոգևոր-բարոյական գաղափարախոսության ազդեցության ծավալում և այլն: Այս խնդիրներն արտացոլված են Գոշի **«Գիրք Դատաստանի»** գլուխգործոց աշխատության (1184թ.) մեջ, որոնք փիլիսոփայական ու իրավական հարթության վրա լուծեց հանճարեղ մտածողը: «Դատաստանագիրքը» բաղկացած է Նախաբանից և 251 հոդվածից:

Հիմնվելով Աստվածաշնչյան գաղափարների վրա՝ Մխիթար Գոշը իշխանության աղբյուր համարում է **Աստծուն**, Աստվածային կամքը, Նախասահմանությունը, քանզի «...չկայ իշխանութիւն որ չէ Աստուածանից. եւ ներկայ իշխանութիւններն Աստուածանից են կարգուած» (*Հռովմ.*, Գլ. ԺԳ, 1–2): Միաժամանակ՝ օրենսգետը հռչակում է ազգերի քաղաքական ինքնակազմակերպման, ինքնակառավարման, իրավունքները:

Գոշը ազգային քաղաքական համակարգում առանձնացնում է իշխանության երկու կառույց՝ **պետական** (աշխարհիկ) և **եկեղեցական** (հոգևոր): Իշխանությունների բաժանման ու համագործակցության սկզբունքով պետք է ապահովվեր հայոց միասնական պետականության (թագավորության) հաստատությունը՝ ընդգրկելով ազգային կեցության բոլոր ոլորտները: Պետությունն ու Եկեղեցին այն հիմնասյուներն են, որոնց վրա հիմնվում է ազգը՝ որպես քաղաքական սուբյեկտ:

Ըստ «Դատաստանագրքի» իշխանության ձևերից յուրաքանչյուրն ունի հարաբերական անկախություն և որոշակի իրավագործություն: Աշխարհիկ իշխանությունը պետք է լուծի պետական և քաղաքական հիմնահարցեր՝ չմիջամտելով եկեղեցու գործունեությանը: Հոգևորականությունը որպես եկեղեցական իշխանության կրող պետք է զբաղվի հոգևոր ոլորտի, քաղաքացիների բարոյահոգեբանական դաստիարակության խնդիրներով՝ չմիջամտելով պետական-քաղաքական գործերին: Բայցև ազգային-պետական առանցքային հիմնահարցեր քննարկելիս օրենսգետը շեշտում է աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների խորհրդակցության և համագործակցության անհրաժեշտությունը՝ «...որպես պետական կառույցի կայունության ու հաստատունության գործոն» [4]:

Իրազեկ լինելով հայոց քաղաքական պատմությանը՝ Գոշը պաշտպանում է **միապետության կենտրոնացված թագավորական իշխանության** գաղափարը: Ըստ նրա՝ թեև պետություն չկա Հայոց աշխարհում, բայց «...դնում ենք թագավորների կանոնակարգը... հանուն պատշաճության» [5]: Ու թեպետ շատերը ծաղրում են՝ հայոց պետության չգոյության

պատճառով, սակայն պետք է հիշել, որ «...ամենայն երկրավոր թագավորությունն անցավոր ու փոփոխական է, առավել ևս մեր թագավորությունը եղավ, քանզի անցյալը [թագավորությունը] այժմ չկա... ապագայում էլ գուցե չենք ունենա, բայց ձևակերպելով եմ իդձս կատարում և [օրենսդրական] առաջարկությունս ջանում եմ ամբողջական պահել» [6]: Այդպիսով՝ Գոշը երկրի անկախությունը պատկերացնում է ինքնիշխան ուժեղ պետականությանը, որը կապվում էր պետության գլխի՝ թագավորի անձի հետ: Ինքնիշխանությունը հիմնավորելու համար նա հաստատում է. «...տիրապետ Աստված է միայն թագավոր, և մարդիկ միայն անվանակիրներ են, և ոչ թե ճշմարիտ [թագավոր]» [7]: Թագավորը կարգվում է Աստծուց, և միայն Նա կարող է փոխել նրան: Այսինքն՝ թագավորն Աստծո փոխանորդն է երկրում՝ կառավարելով Աստծո պատվիրաններով ու ընդօրինակելով Նրան:

Գոշը «Դատաստանագրքում» սահմանում է *«թագավոր»* հասկացությունը՝ երկրային (աշխարհիկ) իմաստով. «...թագավորներ անվանվում են նրանք, ովքեր տիրում են իրենց ողջ ազգին և այլևայլ հարկեր են գանձում այլ ազգերից, իսկ եթե ոչ՝ ապա [իրենք] չեն հարկադրվում» [8]: Այս սահմանման բովանդակությունից բխում է, որ թագավորը՝ ա) օժտված է գերիշխանությամբ, բ) պետության գլուխն է՝ ազգի գերագույն ներկայացուցիչ-տերը, գ) այլ ազգերից հարկ է գանձում, դ) եթե ուրիշներից հարկ չի վերցնում, համենայնդեպս՝ ինքը հարկատու չի դառնում: Ժամանակի ըմբռնումների համաձայն՝ այս հատկորոշիչները բավարար էին՝ թագավորի իշխանությունը համարելու գերակա²:

Ուշագրավ է, որ Գոշը նշում է թագավորի ինքնիշխանության հատկանիշները՝ առանց գործածելու «ինքնիշխան» հասկացությունը: Մինչդեռ Հայոց Հայրապետին առնչվող նույն հոդվածում գրում է. «Իսկ արքունիքում հայրապետը ինքնիշխան լինի նստելու, բայց ոչ արքան հայրապետի տանը» (*«Այլ յարքունիս ինքնիշխան լիցի հայրապետն նստել, այլ ոչ արքայ՝ ի տուն հայրապետի»*) [9]: Ակնհայտ է, որ պետականության բացակայության պայմաններում անվերապահ ճանաչվում է Հայոց Հայրապետության հոգևոր գերագահությունն ու վարչական ինքնիշխանությունը:

Տվյալ պատմաշրջանում Զաքարյան իշխաններին կոչում էին թագավոր, շահնշահ, ինչը վկայում է, որ նրանց իշխանապետությունը, ըստ էության, գրեթե չի տարբերվել թագավորականից: Պաշտոնապես օժված

² Ինքնիշխանության ազգային և եվրոպական ըմբռնումների վերլուծությունը տե՛ս *Միրումյան Կ.*, Քաղաքական ուսմունքների պատմություն, Եր., 2008, էջ. 194–199, 240–241, 291–292: *Սաֆարյան Գ.*, Միխիթար Գոշի պետաիրավական հայեցակարգը // «Փիլիսոփայությունը արդի աշխարհում», Գիրք III, Եր., 2013, էջ. 119–120:

չլինելով թագավոր՝ Չաքարյանները որևէ երկրի հարկատու չէին, այլ հենց իրենք էին հարկ վերցնում ուրիշներից: Այս իրողությունը վկայում է Կիրակոս Գանձակեցին. Չաքարեն և Իվանեն «...պարսիկների ու արաբների կողմից գրավված հայոց շատ երկրամասեր խլեցին... Հարկատու դարձրին նաև Կարին քաղաքի սուլթանին», և «...նրանց քաջության համբավը տարածվեց շատ երկրներ, և շատ ազգեր, որը սիրուց, որն էլ երկյուղից, հարկատու դարձան նրանց» [10]:

Ըստ «Դատաստանագրքի»՝ թագավորի անձը սրբազան ու անձեռնմխելի է: Նրա՝ որպես պետական իշխանության գերագույն կրողի բացառիկ իրավունքներն են. պատերազմ հայտարարելը, արտաքին հարաբերությունները կարգավորելը, քաղաքների, բերդերի, կամուրջների կառուցումը, աշխարհագիր անցկացնելը, դրամ հատելը, մահապատժի դատավճիռը, ներման իրավունքը և այլն:

Գոշի հայեցակարգում ուրվագծվում է *ազգային իրավական պետության մոդել*. երկրի բոլոր խավերը, այդ թվում՝ բարձրաշխարհիկ իշխանները, եկեղեցականները և նույնիսկ թագավորը ենթարկվում են որոշակի իրավանորմերի: Արքայի պարտականություններն են՝ կառավարում արդարության սկզբունքով, երկրի անվտանգության և խաղաղության պահպանում, ներքին պառակտումների կանխում: Նա պետք է լինի մարդասեր, Հայ առաքելական եկեղեցու անդամ, օրինակ վերցնի բարեպաշտներից, «...հեթանոս թագավորների օրենքով հարձեր չպահի, այլ օրինավոր ամուսնության մեջ լինի, քանզի նրան իշխանություն է [տրված] հայրապետի հետ ասյան ելնել» [11]:

Պետության աստիճանակարգում ինքնիշխան թագավորին ստորադասվում են աշխարհիկ իշխանները, որոնց իրավունքներն ու պարտականությունները Գոշը սահմանում է՝ ելնելով *կառավարման կենտրոնացման և տեղական մարմինների հարաբերական սպակենտրոնացման* սկզբունքներից: Հասկանալով, որ Հայաստանի քաղաքական անկման պատճառներից են երկրի զինված ուժերի ցրվածությունն ու իշխանների՝ իրենց գավառներում ներփակվելը, նա քննադատում է այն իշխաններին, ովքեր անջատամտությամբ «...լաւ համարէին ի ստրկության կալ ամենայն ազգաց, քան թէ հնազանդել միմեանց և կեալ յազատության» [12]: Մտածողը փորձում է իրավական հարթության վրա լուծել իշխանների կենտրոնախույս ձգտումները չեզոքացնելու խնդիրը, ինչն այդ ժամանակ հնարավոր էր միայն ստորակարգության սկզբունքով:

Գոշը սահմանում է աշխարհիկ պաշտոնյաների պարտականությունները. արդարացի կառավարում՝ ըստ օրենքների, չափավոր հարկերի

սահմանում: Սոցիալական հարթության վրա՝ կառավարման գործառույթները պայմանավորված էին իշխաններին ենթակա դասերի ստորակարգությամբ, ըստ որի՝ իշխանաց իշխանին ենթակա են իշխանները, վերջիններիս՝ ազնվականները, նրանց էլ՝ շինականները: Յուրաքանչյուր դաս օժտված է որոշակի իրավունքներով և վերադասի ու պետության առջև պարտականություններով: Գոշը փորձում է մեղմել տարբեր դասերի միջև առկա հակասությունները և ներդաշնակեցնել նրանց շահերը: Արդարության և օրինականության համատեղման սկզբունքով իրականացվող իրավական այս քաղաքականության նպատակն էր հաստատել ազգային միասնություն և սոցիալական ներդաշնակություն:

«Դատաստանագրքում» առկա են տարբեր պատիժներ՝ թագավորին և իշխաններին անարգողների նկատմամբ. «Եթե մեկը անիրավաբար թշնամանա թագավորների կամ իշխանների հետ՝ պատժվի, եթե կրոնավոր է՝ կարգալույծ արվի, իսկ եթե աշխարհական է՝ մեկուսացվի»: Այս վճիռը պետք է ընդունեն եպիսկոպոսներն ու վարդապետները, «...քանի որ թագավորներն ու իշխանները Աստծո պատկերն են» [13]: Այնուամենայնիվ՝ թագավորի իշխանությունն անսահմանափակ չէ, և Գոշը բացարձակապետություն չի քարոզում՝ հորդորելով. «Եթե անհրաժեշտ լինի թագավորին պատժել՝ երկրի խաղաղության պահպանման համար, պետք է դա արվի մեկ այլ թագավորի և հայրապետի կամքով ու ամենայն արդարությամբ» [14]:

Հայկական թագավորության երկրորդ հիմնասյունը ինքնիշխան ու անկախ Հայ եկեղեցին է, որը պատմական մեծ դերակատարություն է ունեցել ժողովրդին համախմբելու, ազգային-ազատագրական պայքարը կազմակերպելու, պետականության վերականգնման, ազգային միասնության հաստատման և այլ գործընթացներում: Ակնհայտ է, որ Հայ եկեղեցու գործունեությունը միշտ առնչվել է ազգային-քաղաքական իրողություններին: Այս համատեքստում բացահայտվում է հոգևոր-եկեղեցական և աշխարհիկ-քաղաքական իշխանությունների փոխհարաբերության նշանակությունը, մեկնաբանվում Հայ եկեղեցու վարչական ինքնիշխանության և ազգային էության հիմքերը:

Ազգային գիտակցության մեջ ամրագրված է, որ Հայ եկեղեցու կենսականության աղբյուրը առաքելական ծագումն ու սահմանադրականությունն են: Պատմականորեն Եկեղեցու դերը պայմանավորված է եղել նրա իրականացրած հոգևոր-մշակութային, քաղաքական-խորհրդակցական, դիվանագիտական, օրենսդրական, դատական գործառույթներով, ինչպես նաև միջպետական և միջեկեղեցական հարաբերություններում միջնորդական գործունեությամբ [15]:

Պետականության անկումից հետո հայ ժողովուրդն ազգային իշխանությունը կենտրոնացրել է եկեղեցու մեջ, որը դարձել է ազգային կեցության բարձրագույն իրավասուբյեկտը: Սակայն Հայ եկեղեցին երբեք չի ձգտել աստվածապետության, ինչը, արևմտահայ քաղաքական մտածող Մատթեոս Մամուրյանի վկայությամբ, հաստատում են նաև եվրոպացի աստվածաբանները. «Հայ Եկեղեցին առաքելական ճշմարիտ սահմաններու վրայ հիմնուած է, ազատ միապետական եւ աստուածապետական հակումներէ, ազատ իր ընտրական ու հովուական գործողութեանց մէջ, եւ գերծ... անթոյլատու ոգիէն» [16]: Հայ եկեղեցին նաև չի հավակնել «պետական եկեղեցի» տիտղոսի, ինչը կլինէր եկեղեցու ինքնության և անկախության սկզբունքի բացարձակ ժխտում:

«Դատաստանագրքում» շեշտվում է Հայ եկեղեցու ազգային բնույթը, քանզի այն ազգային գաղափարախոսությունը կրող ու քարոզող կառույց է: Գոշը միանշանակ պաշտպանում է հայադավանությունը, և, ինչպես Խ. Թորոսյանն է հաստատում, «...օրենքն այն ժամանակ նաև կրոն էր, իսկ այս վերջինը ոչ միայն ծես էր ու հավատք, այլև քաղաքական ինքնորոշման ու ազգային ինքնապահպանության հատու գենք» [17]:

Մինչև հայոց պետականության վերահաստատումը Հայ եկեղեցին համազգային միակ կենտրոնացված կազմակերպությունն էր, որն ի գործ էր Հայաստանի տարանջատված մասերն ու առանձին իշխանապետությունները միավորել ազգային-քաղաքական գաղափարների շուրջ: Սահմեղական ցեղերի սպառնալիքի պարագայում Գոշը չի բացառում քրիստոնեական համերաշխությունը եկեղեցիների միջև: Սակայն այդ ընդհանրությունը մեկնաբանում է միայն որպես **ազգային եկեղեցիների իրավահավասարություն**՝ առանց որևէ եկեղեցու վարչական գերիշխանության: Նա մերժում է թե՛ հունամետությունը, թե՛ լատինամետությունը՝ պաշտպանելով ազգերի գաղափարախոսական, կրոնադավանական ազատությունը, նրանց ինքնակառավարման, սեփական պատմական ուղու ընտրության ազատությունը: Ըստ Գոշի՝ դավանաբանական տարբերությունները չպետք է ազդեն ժողովուրդների հարաբերությունների վրա: Քրիստոնյա ժողովուրդները դավանանքով չեն կարող միավորվել, բայց կարող են նաև թշնամիներ չլինել, իսկ քաղաքական հարթության վրա նույնիսկ լինել դաշնակիցներ [18]:

«Դատաստանագիրքը» մտակառուցված է **պետություն-եկեղեցի-ժողովուրդ** հարաբերակցության հենքի վրա: Բազմաթիվ սահմանադրույթներ արտացոլում են աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների, ինչպես նաև իշխանության ու ժողովրդի միջև հարաբերությունների իրավական

կարգավորման եղանակները: Գոշը ձգտում էր նորմատիվ բնույթ հաղորդել նշված հարաբերություններին, որոնք կազմում են ստեղծվելիք հայոց պետության պետաիրավական հիմքը:

Ըստ Գոշի՝ եկեղեցին պետք է կառավարի ճշմարիտ վճիռներով՝ երկնային կարգերի համաձայն: Ինչպես աշխարհիկ իշխանության պարագայում, նա կարևորում է նաև **հոգևոր աստիճանակարգությունը**՝ վերից վար: Օրինակ՝ ծագած խնդիրների դեպքում վերջնական խոսքը պատկանում է նրան, ով հոգևոր աստիճանով ավելի բարձր է: Եկեղեցին ևս կառավարում է կենտրոնացման և հարաբերական ապակենտրոնացման սկզբունքներով, ինչը փաստարկվում է իրավական նորմով. «Յուրաքանչյուր ոք լոկ իր տիրույթում կարող է որոշումներ կայացնել գյուղերի, քաղաքների և քահանաներ օձելու վերաբերյալ, իսկ այլ տիրույթում իշխանությունների նկատմամբ իրավունք չունի... ձեռնարկել որևէ բան, եթե չկա մայրաքաղաքի եպիսկոպոսի որոշումը: Եվ ոչ էլ ինքը՝ կաթողիկոսը, կարող է որևէ բան անել՝ առանց մյուս եպիսկոպոսների հետ խորհրդակցելու» [19]:

Այդպիսով՝ «Դատաստանագրքում» վերահաստատվում է դեռևս Ազգային-եկեղեցական առաջին ժողովներով սահմանված **խորհրդակցական սկզբունքը**, որը կիրառվում էր ազգային կարևորագույն խնդիրներ լուծելիս [20]: Այս համատեքստում հատկանշական է Գոշի հորդորը. «Պետք չէ գավառների եկեղեցիների վաղնջական ավանդույթները ենթարկել նորաձևության: Դա է հրահանգված վիճակներին, պաշտոնյաներին և ժողովրդին: Եվ եթե մի հայրապետ կամենա ավանդույթը փոխել, պարտավոր է դա անել Ժողովով, անվտանգ, ըստ օրենսգրքի» [21]:

Եկեղեցին ունի իրավագործություն՝ մասնակցելու երկրի հասարակական-քաղաքական կարևոր հարցերի քննարկմանը: Ամենայն Հայոց Հայրապետն ազատ մուտք ունի Արքունիք՝ մասնակցելու գահաժառանգի ընտրությանը, նրա համաձայնությունն անհրաժեշտ է թագավորին պատժելիս կամ գահընկեց անելիս: Գոշը մեկնաբանում է եկեղեցականների ընտրակարգը: Թեմերի «...աթոռակալ [եպիսկոպոս] ընտրելու պատիվն ու շնորհը գլխավորինն է, այսինքն՝ կաթողիկոսինը, որոշիչ կամքը՝ մեծ ժողովինն է» [22]:

Գոշը մեկնաբանում է **դատական համակարգի** բնույթն ու գործառույթները՝ որպես իշխանության առանձին ճյուղ: Ըստ նրա՝ «**դատաստան**» անվանումը բաղկացած է երկու մասից՝ «դատ և ստան, արան, այսինքն՝ տեղ»: Այն նշանակում է՝ **դատարան և քննարան**, ուր քննում են գործը՝ քննող դատավորի, ամբաստանողի և ամբաստանյալի համատեղ

ներկայությամբ: «Դատաստանագրքի» Նախաբանի Դ գլխում մեկնաբանվում է դատելու իրավունքի ակունքները. «Բոլորի առաջին դատավորը Աստված է... դատավոր արդար», նա է կանխապես տալիս դատաստանի տնօրինությունը, որով մարդկանց հայտնվում է դատարանի մասին, և մեզ սովորեցնում է դատել: Աստված դատավորի կոչում տվեց մարդկանց՝ ասելով. «Արդարություն արեք որբին», և դա հատուկ շնորհ է թագավորներին, իշխաններին, ժողովրդի մեծերին, մարգարեներին և քահանաներին հավասարապես:

Գոշի հայեցակարգում էական է *դատելու ազգային իրավունքի* շեշտադրումը. ինչպես Աստված իրավունք շնորհեց 12 առաքյալներին՝ դատելու Իսրայելի տասներկու ցեղերին, «...նույնը տվեց և յուրաքանչյուր ազգի եկեղեցիների առաջնորդներին՝ նստելու ու դատելու յուրայիններին»: Բացի այդ, յուրաքանչյուրին «...սեփական անձի դատավոր կարգեց... որպեսզի մեր անձի վրա արդարությամբ դատավոր կանգնելով՝ մեր հոգին ուղղենք դեպի անպարսավ վարքը» [23]: Այսինքն՝ նա հաստատում է նաև անձնաքննության, ինքնադատելու պարտավորությունը՝ հանուն բարոյական և օրինավոր կենսակերպի:

Ըստ «Դատաստանագրքի», իշխանության ձևերին համապատասխան՝ Հայաստանում պետք է գործեն դատական երկու համակարգ՝ աշխարհիկ և հոգևոր: *Աշխարհիկ* դատարաններն են՝ թագավորական դատարան, իշխանական դատարան, ազատների դատարան, ստորին դատարաններ (զավառական դատավորներ, գյուղական ավագանի և այլն): Աշխարհիկ դատական համակարգը գլխավորում է *թագավորական կամ Արքունի դատարանը*՝ որպես առաջին ատյան: Երկրորդ ատյանը կազմում են *իշխանական* (իշխանաց իշխանի, ավագ և կրտսեր իշխանների) դատարանները, որոնց իրավասությունները սահմանված են հետևյալ կերպ. «Իշխանները իրավունք չունեն առանց թագավորի հրամանի սպանել սպանողներին, բայց գողին պատժելու [խրատելու] իրավունք իշխանն ունի»: Աշխարհիկ դատական համակարգի երրորդ աստիճանը կազմում է *ազատների դատարանը*՝ ենթակա իշխանին. «Ազնվականը առանց իշխանի հրամանի իրավունք չունի գողերին պատժելու» [24]: *Ավագների խորհուրդը* («Ծերոց ատյան») աշխարհիկ դատական համակարգի ամենաստորին օղակն է, որը քննում է համքարությունների կամ դրանց անդամների միջև ծագած վեճերը:

Աշխարհիկ դատարաններում վճռվում էին թագավորի, իշխանների, ազատների, հողատերերի ու գյուղացիների փոխհարաբերությունները, պարտավորությունները, հարկային, պետության ու հպատակների, տերունական-ենթակայական հարաբերությունները, զինապարտության,

պատերազմական ավարի բաժանման, գույքային և ոչ գույքային հարաբերությունները, առուվաճառքի կարգավորման, աշխատանքի անվտանգության ապահովման, դավաճանության, լրտեսության, սպանության, գողության, մարմնական վնասվածքների պատճառման և այլ գործեր:

Հոգևոր-եկեղեցական դատական համակարգը ներառում է՝ եկեղեցական ժողով, կաթողիկոսի դատարան, եպիսկոպոսի դատարան, վարդապետական դատարան և ծխական քահանայի դատարան: Պետականության բացակայության պարագայում հոգևորականությունը դատական իշխանության միակ սուբյեկտն էր:

Եկեղեցական ժողովը դատական առաջին աստիճանն է՝ օրենսդրական ու դատական գործունեությամբ: Այն ոչ միայն ընդունում է կանոններ, այլև իրականացնում արդարադատություն: Հիմնվելով Առաքելական ու Նիկիական կանոնների³ վրա՝ Գոշը բացատրում է. «...կարգ կա տարեկան երկու անգամ ժողով գումարել և պատահականություններն ու սխալները քննել և կանոններ ու ապաշխարություն սահմանել: Այսպես պատշաճ է նաև դատական գործերի նկատմամբ. որքան նորանոր խնդիրներ պատահեն՝ դրանք ևս քննվեն և կարգվեն դատաստանագրերում՝ հետագայում... կիրառելու համար» [25]:

Երկրորդ աստիճանը **կաթողիկոսական դատարանն** է՝ Կաթողիկոսի գլխավորությամբ: Այն մշտական գործող մարմին է՝ եպիսկոպոսների մասնակցությամբ: Գոշն առանձնակի շեշտում է այս դատարանի դերն ու նշանակությունը. «Քանի որ այժմ չունենք ոչ թագավոր, ոչ իշխան,

³ Հարկ է նշել, որ Առաքելական կանոններում մերժվում է թեմերի առաջնորդների կամայականությունը և հաստատվում որոշում ընդունելու խորհրդակցական սկզբունքը. «ԼԲ. Եպիսկոպոսաց իւրաքանչիւր ազգի պարտի գիտել զառաջինն եւ զնա համարել զլիաւոր, եւ մի՛ ինչ առնել թարց կամաց նորա. բայց միայն զայն առնել իւրաքանչիւրում, զոր ինչ իւրում վիճակի, եւ որ ընդ նորին իշխանութեան եղեալ տեղեացն անկ է: Եւ առաջինն... եւս չիշխէ առնել թարց խորհրդոյ ամենից եւ ոչինչ», Սահմանք եւ Կանոնք Առաքելոց ի ձեռն *Կղիմայ*, առաքեալ հեթանոսաց, Կանոն ԼԲ // Կանոնգիրք Հայոց (Ձեռագրերի համեմատությամբ խմբեց Ա. Ղլտճեան), Թիֆլիս, 1913, էջ 241: Այս սկզբունքը Տիեզերածոհովների և տեղական ժողովների միջոցով ընդհանրացավ ու տարածվեց քրիստոնյա ազգերի, այդ թվում՝ հայոց շրջանում: Հոգևոր իշխանությունն իբրև սկզբունք ընդունեց ժողովների պարբերաբար գումարման Առաքելական սահմանումը, որը պատվիրում է. «ԼԵ. Երկիցս ի տարւոջ ժողով լիցի եպիսկոպոսաց, և քննեսցեն ընդ միմեանս զվարդապետութիւնս բարեպաշտութեան, զպատահեալսն յեղեղեցւոջ ընդդիմաբանութիւն՝ լուծցեն...», Բ. Կանոնք Առաքելականք, Կանոն ԼԵ // Կանոնգիրք Հայոց, էջ 242: Տես նաև՝ Կանոնք Նիկիական, Կանոն Ե. // Կանոնագիրք Հայոց, Հ. Ա., Աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, ՀՄՍՌ ԳԱ հրատ., Եր., 1964, էջ. 119–120:

որպեսզի այս բարեկարգության գործը նրանց ձեռքում լինի, ուստի [այն] մեր հայրապետի կողմից կկատարվի, քանզի նա է եկեղեցու դատավորների գլուխը» [26]:

Երրորդ աստյանը *Եպիկոպոսական դատարանն է՝* թեմական արքեպիսկոպոսի գլխավորությամբ: Այն նույնպես կոլեգիալ մարմին էր, որտեղ գործերը քննում էին վարդապետների կամ գիտնական քահանաների մասնակցությամբ: Գոշի հայեցակետով՝ Եպիսկոպոսը դատական գործառնությունը պետք է ստանձնի որպես ավանդ և իրականացնի այնքան ժամանակ, քանի դեռ չի վերականգնվել թագավորի կամ իշխանի իշխանությունը: Հարկ է նշել, որ Հայաստանում իրավակարգավորման այս սկզբունքն անհրաժեշտ էր՝ *պահպանելու ազգային դատավարական ինքնությունը և բացառելու քրիստոնյաների դատական գործառույթների փոխանցումն այլադավաններին:*

Ուշագրավ է նաև, որ Գոշը սահմանում է Եպիսկոպոսական դատավարությանը աշխարհիկ Ավագանիի մասնակցության իրավունքը՝ բացատրելով. եթե Եպիսկոպոսները չեն բավարարում դատավարության պահանջներին, «...թող փորձառու աշխարհականների, քահանաների և վարդապետների գործակցությամբ վարեն դատը, և այդպես անբասիր կլինի վճիռը» (27): Այդպիսով՝ օրենսդրորեն ամրագրվում է աշխարհիկ և հոգևոր իշխանությունների համագործակցությունը ոչ միայն սոցիալ-քաղաքական, այլև դատական ու դատավարական գործընթացներում:

Չորրորդ աստյանը *վարդապետական դատարանն է:* Վարդապետները պետք է կրթված լինեն և՛ Կանոնական, և՛ Հին ու Նոր Կտակարանների օրենքներով: Ըստ «Դատաստանագրքի»՝ վարդապետն իրավունք ունի կիրառել եկեղեցական պատիժներ՝ բանադրանք, ապաշխարանք և այլն: Ստորին դատական աստյանը *ծխական քահանայի դատարանն է:* Ըստ Գոշի՝ դատարանի նպատակը պետք է լինեն արդարադատության հաստատումը, անկարգությունների վերացումը, հասարակության մեջ խաղաղության հաստատումը, ինչպես նաև հանցագործությունների կանխարգելումը:

Եկեղեցական դատարաններում քննվում և վճռվում էին այնպիսի գործեր, որոնք վերաբերում էին եկեղեցու վարչական կազմակերպությանը, պաշտամունքին, ծիսակատարությանը, հոգևորականների իրավունքներին ու պարտականություններին, գույքային փոխհարաբերություններին՝ կապված եկեղեցու ունեցվածքի հետ, հոգևոր դատավորների վարձատրությանը, ամուսնաընտանեկան իրավունքին (ամուսնություն, ամուսնալուծություն, բարոյական խնդիրներ, ժառանգական իրավունք),

ինչպես նաև այն արարքներին, որոնցում բացակայում է մեղքը՝ քրեաիրավական իմաստով և այլն: Բնականաբար՝ պետականության բացակայության պայմաններում ավելի էր ընդարձակվում եկեղեցական դատարանների ընդդատյա գործերի շրջանակը:

Գոշի «Դատաստանագիրքը» մեծ ազդեցություն է ունեցել Սմբատ Սպարապետի իրավաքաղաքական հայեցակարգի ձևավորման և օրենսդրական գործունեության վրա:

Սմբատ Սպարապետը (1208–1276թթ.) հայտնի է որպես Կիլիկյան Հայկական պետության ականավոր քաղաքական գործիչ, զորավար, դիվանագետ, օրենսդիր և պատմագիր: Նրա գլուխգործոցը՝ «Դատաստանագիրքը» («Յաղագս դատաստանաց թագաւորաց» կամ «Օրէնք և կանոնք ընդհանրական եկեղեցականաց և աշխահականաց», 1265թ.) [28], կազմվել է Կիլիկյան Հայկական թագավորությունում հասարակական-քաղաքական, տնտեսական և իրավական հարաբերությունները կարգավորելու նպատակով: Եթե Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» հայկական ապագա՝ ստեղծվելիք պետության օրենսգիրք էր, որն ամրագրում էր թագավորական և եկեղեցական իշխանությունների միջև ներդաշնակության սկզբունքը, ապա Սմբատի «Դատաստանագիրքը» Կիլիկյան թագավորությունում 100 տարի գործող օրենսգիրք էր, որում պետության գերակայության և շահերի պաշտպանության գաղափարներն ունեին առաջնային նշանակություն:

Սպարապետը նույնպես պաշտպանում է իշխանությունների տարանջատման և համագործակցության սկզբունքը՝ ընդունելով իշխանության երկու ձև՝ **թագավորական և եկեղեցական**: Այս իրողությունն արտացոլված է հենց «Դատաստանագրքի» առաջաբանում. «Եվ ահավասիկ, գրեցի այս դատաստանագիրքը ի հաստատություն Սուրբ Եկեղեցու և ի նպաստ պետության հարատևության, ապա աշխարհական դատավորների և թագավորների օգտագործման համար» [29]: Եկեղեցական իշխանությունը ստորադասվում է պետականին, կազմում պետական կառույցի ենթակառույցը: Ըստ Ա. Սուքիասյանի՝ «...դա հասկանալի է, քանի որ Կիլիկիայում հայ հոգևորականությունը չուներ բացառիկ իշխանություն, որն ուներ բուն Հայաստանում: Կիլիկիայում աշխարհիկ իշխանությունը՝ ի դեմս թագավորի և նրա վասալների, տիրապետում էր իրավական հարաբերությունների ողջ ոլորտը՝ եկեղեցուն թողնելով միայն կրոնի և բարոյականության հարցերը» [30]:

Սմբատը պաշտպանում է Հայոց պետության ինքնիշխանության, պետական շահերի առաջնայնության գաղափարները: Ըստ նրա՝ պետական

կառույցի լավագույն ձևը *սահմանափակ (սահմանադրական) միապետությունն է՝* կենտրոնացված և տեղական ինքնակառավարման մարմինների կուռ համակարգով: Նա մերժում է բռնապետությունն ու բացարձակապետությունը, որոնք մշտապես դատապարտված են եղել կործանման:

Ըստ Կ. Միրումյանի՝ Սպարապետի իրավաքաղաքական հայեցակարգը միտված էր երկմիասնական խնդրի լուծմանը. «1) կենտրոնական թագավորական իշխանության ամրապնդման համար ստեղծել իրավական և քաղաքական հիմք՝ որպես պետական ինքնիշխանության և ժողովրդի անվտանգության երաշխիք, 2) ընդլայնել ավատատերերի իրավունքները և ապահովել նրանց իմունիտետը՝ որպես հասարակության սոցիալական կայունության հիմք» [31]:

Ինչպես Գոշի, այնպես էլ Սպարապետի փաստարկմամբ՝ թագավորական իշխանությունը գերագույնն է: Թագավորը պետության գլուխն է, երկրի գլխավոր օրենսդիրն ու կառավարիչը, որովհետև «...թագավորելը շնորհվում է Աստծուց, իսկ թագավորը Աստծո փոխանորդն է երկրի վրա» [32]: Հետևաբար՝ նրա անձն անձեռնմխելի է: Թագավորները կարգվում են Աստծո կողմից, կամ նրանց ընտրում են մարդիկ. «Օրենքը հրամայում է. նրանք, ովքեր Աստծո կողմից ընտրված լինեն, նրանց միայն Աստված կարող է աքսորել՝ լավ լինեն, թե վատ»: Իսկ մարդկանց կողմից նշանակվածներին, եթե նրանք «...այնքան պիղծ լինեն, որ երկիրը չկարողանա հանդուրժել», մարդիկ եկեղեցու և երկրի բնակչության համաձայնությամբ կարող են աքսորել: Իշխանները չեն կարող մահապատժի ենթարկել թագավորին՝ անգամ երկրի փրկության համար, քանզի «...օրենքը պատվիրում է, որ առանց այլ թագավորի և հայրապետի նրանք այդպես վարվելու իրավունք չունեն, այլ միայն ուրիշ թագավորի ու հայրապետի ներկայությամբ և ողջ երկրի հավանությամբ» [33]:

Թագավորի բացառիկ իրավունքներն են. պետության ներկայացում միջազգային հարաբերություններում, օրենքների հրապարակում, պատերազմի հայտարարում, հաշտության կնքում, դեսպանների առաքում, դրամի հատում, հարկերի սահմանում, կալանման, վրեժխնդրության և մահվան դատավճռի իրավունքներ (այսպիսի իրավունք ունեին նաև թագավորի կողմից լիազորված Մեծ իշխանը կամ բարոնը, ինչպեսև արքայատոհմից սերող այլ իշխաններ), ներման իրավունք, Բարոնների խորհրդի և ազնվականության գործերով Գերագույն դատարանի նախագահման իրավունք:

Այսպիսով՝ *Արքունիքը (Դարպասը) թագավորի գլխավորությամբ միաժամանակ և՛ դատարան էր, և՛ գանձարան, և՛ կառավարման կենտրոն՝ օժտված լինելով օրենսդրական, գործադիր և դատական իրավագործությամբ:*

Թագավորի պարտավորություններն են. որպես պետության գլուխ՝ բարեպաշտ թագավորը պետք է գերծ մնա արտաամուսնական կապերից: Քրիստոնեական արդարության սկզբունքով նա պարտավոր է «...դատ անել կշռադատված, անաչառ, անկաշառ և առանց ծուլության», լսել բոլոր կարիքավորների բողոքները՝ «...արդարադատ վճիռ կայացնելով նրանց նկատմամբ» [34]: Թագավորը պետք է սահմանի արդարացի հարկեր, պաշտպանի աղքատներին, գերծ մնա ապօրինի ավարառությունից, պատերազմի ժամանակ գթասրտությամբ վերաբերի գերեվարվածներին և այլն:

Բազմաթիվ նորմեր կարգավորում են *թագավորի և նրա վասալների հարաբերությունները*: Վասալ-իշխանները բաժանվում էին երկու կարգի. 1) ինքնիշխան (ինքնակալ) կամ տոհմիկ իշխաններ, ովքեր Կիլիկիայում իշխանական կարգավիճակ ունեին նախքան Ռուբինյան թագավորների գահակալությունը, 2) թագավորի կողմից իշխանական աստիճանի բարձրացած իշխաններ: Եթե թագավորն իր նշանակած իշխանների հետ կարող էր վարվել ըստ իր կամքի, օրինակ՝ զրկել իշխանական պատվից կամ հեռացնել իշխանությունից, ապա ինքնիշխան վասալների հանդեպ որոշում կարող է կայացնել միայն մյուս իշխանների համաձայնությամբ:

Ինչպես Գոշը, Սմբատը պաշտպանում է *հայրենակալվածքի նկատմամբ իշխանների իրավունքները*, արգելում առանց օրինական հիմքի սեփականության բռնագրավումը՝ անկախ դրա պատկանելությունից: Սեփականության ժառանգման իրավունքը պաշտպանվում էր նույնիսկ վասալի՝ թագավորին դավաճանելու պարագայում: Եթե իշխանը կամ այլ պաշտոնյա հանցավոր արարք թույլ տա թագավորի նկատմամբ, ապա օրենքով մահապատժի կենթարկվի, «...իսկ նրա եղբայրները և որդիները, որոնք ծնված են եղել հոր հանցանք գործելուց առաջ չեն զրկվում ժառանգական կալվածքից» [35]:

Հետևելով Գոշին՝ Սմբատը օրինակարգում է տվյալ ժամանակաշրջանում ձևավորված դասային կարգը, ընդգծում ազնվականության ու հոգևորականության և այլ դասերի դերը հասարակության մեջ: Այս համատեքստում օրենսգետը հոչակում է. «Պատվեցե՛ք զանազան արիեստավորներին, սակայն դարբնին, հյուսնին և քարագործին ավելի, էլ ավելի շատ՝ մատենագիրներին և բժիշկներին, քանի որ նրանք հոգ են տանում մարդ արարածի մասին: Արդարադատության պաշտոնեությունը թող

երկրի կողմից հարգանք վայելի: Բոլոր դասերից առավել հարգանքի արժանին վարդապետներն են, որովհետև նրանք բժշկում են հոգին և հաստատուն հիմքն են եկեղեցու» [36]:

«Դատաստանագրքում» գնահատվում է *Հայ եկեղեցու* և *հոգևոր իշխանություն* դերը: Օրենքի ուժով պահպանվում են եկեղեցու ինքնությունն ու հայադավանության անխախտելիությունը: Սմբատը հոգևոր դասին հորդորում է. «...ուսանել սուրբ Մահակի գրած ընդարձակ սահմանումներից», որոնցից կարևոր է համարում այն, որ Հայրապետները պետք է ամեն տարի մայրաքաղաքում ժողով հրավիրեն, «...որպեսզի ճշտեն հավատքին և եկեղեցու բարեկարգությանը վերաբերող հարցերը և ուղղեն սխալները» [37]:

Հարկ է նշել, որ *պետություն-եկեղեցի* հարաբերակցությունը նույնական չէր Հայաստանի արևելյան ու հյուսիսային գավառներում և Կիլիկիայում: Եթե բուն Հայաստանում հոգևոր իշխանությունն իրականացնում էր ոչ միայն հոգևոր, այլև քաղաքական, դիվանագիտական, օրենսդրական, դատական և այլ գործառույթներ, Կիլիկիայում հայոց պետականության առկայության շնորհիվ հստակ բաժանված էին պետության և եկեղեցու իրավունքներն ու գործառույթները: Ըստ օրենսգետի՝ հոգևորականությունը չպետք է միջամտի պետական գործերին. «Եպիսկոպոսին պատշաճ չէ զբաղվել աշխարհիկ և որևէ այլ գործով, բացի եկեղեցական գործերից, եկեղեցականների դատական գործերը պետք է արդար վարի» [38]: Մյուս կողմից՝ պետական, քաղաքական այրերը չպետք է միջամտեն եկեղեցական գործերին:

Կիլիկյան Հայաստանում էական դեր ունեւր *դատական իշխանությունը*: Սպարապետը պետության ամենակարևոր գործառույթը համարում է արդարադատության ապահովումը, ինչպես նաև սահմանված օրենքների կիրառումը, հանցագործությունների կանխարգելումը և հանցագործների պատժումը: Նա ընդունում է դատական իշխանության երկու ձև՝ *պետական (թագավորական) և եկեղեցական (հոգևոր)*: Արդարադատությունը կենտրոնացած է պետական-թագավորական իշխանության ձեռքում: Հոգևոր իշխանությունը ենթակա է պետական իշխանությանը: Եկեղեցին վարում էր սոսկ կրոնին, բարոյականությանը, ամուսնությանն ու ընտանիքին առնչվող գործերի քննությունը: Ըստ Կ. Միրումյանի՝ «Ի տարբերություն Գոշի, Սմբատը այս հարցերը մեկնաբանում է ոչ թե մարդու, այլ պետական շահերի տեսանկյունից» [39]:

Հարկ է նշել, որ Հայոց թագավորության և իշխանապետությունների առկայության պարագայում աշխարհիկ դատարաններն ունեին առաջատար դեր, որովհետև դատավորներն աշխարհիկ իշխանության կրողն

էին, աշխարհիկ իշխանություններն էին տնօրինում հարկադրամիջոցները և առաջին հերթին՝ ռազմական ուժը: «Օտար տիրապետության պարագայում երկրի այն մասերում, որտեղ գործունակ էին հայկական իշխանությունները, դատական իրավագործությունը նույնպես բաժանված էր աշխարհիկի և հոգևորի, թեև կաթողիկոսի դատարանը որոշակի գերակայություն ուներ: Հոգևորականությունը դառնում էր դատական իշխանության բացարձակ կրող միայն այն դեպքում, երբ բացակայում էր ազգային աշխարհիկ իշխանությունը» [40]:

Կիլիկյան Հայաստանում արդարադատության պետական քաղաքականությունը, դատական գերագույն իշխանությունն իրականացվում էր **դատական բազմաստիճան համակարգի** միջոցով⁴:

Պետական դատարաններն են. ա) թագավորի դատարան, բ) թագավորին առընթեր դատարան, գ) Մեծ իշխանի դատարան, դ) Մխի արքեպիսկոպոսի դատարան, ե) պարոնի դատարան, զ) ստորին դատարաններ (գավառական, քաղաքային, գյուղական): Դատական իրավասությամբ **եռաստիճան** համակարգ են կազմում. 1) թագավորի և Մեծ իշխանի դատարանը, 2) իշխանական դատարանը, 3) ստորին դատարանները:

Մմբատը սահմանել է ընդդատության հետևյալ սկզբունքը. **հավասարներին դատում են հավասարները, և վերադասները դատում են ստորադասներին**. «Իշխաններին դատում է իշխանաց իշխանը՝ իշխանների հետ և նրանց հավանությամբ, նույնը և ազատներին, որ մեր հեծյալներն ու լիճ ճորտերն են՝ իրենց հավասարների հետ. պետք է դատեն իշխանաց իշխանների, իսկ թագավորի ավատառուներին՝ թագավորի հրամանով» [41]: Նույն կերպ մյուս դասերը իրենց համապատասխան դատարանում պետք է դատեն իրենց ենթականերին, բայց առանց թագավորի կամ իշխանաց իշխանի հրամանի՝ մարմնական պատիժների և մահապատժի չպետք է ենթարկեն:

Թագավորական գերագույն դատարանը առաջին աստիճանի դատարանն էր, որտեղ քննվում էին հայրենիքի դավաճանության, գանձագողության, դիտավորյալ սպանության և ծանրագույն այլ հանցագործություններ: Վերջինների թվին են դասվում պետական օրենքների խեղա-

⁴ Հարկ է նշել, որ և՛ Մխիթար Գոշի, և՛ Մպարապետի Դատաստանագրքերում, ինչպես նաև հին ֆրանսերենից Մմբատի թարգմանած «Անտիոքի ասիզներում» «դատարան» հասկացության փոխարեն կիրառվում են «թագավոր», «իշխան», «եպիսկոպոս» և արդարադատությունն իրագործող այլ սուբյեկտների անվանումները // Steu` Assises D'Antioche (Անսիզ Անտիոքայ) / Reproduites en Francais. Venise, 1876: Steu նաև՝ Ալիշան Ն. Ղեկոնդ Վ.Մ., Հայապատում, Մասն Ա, Վենետիկ, 1901, էջ 111:

թյուրումն ու սխալ կիրառումը, դատավորին չենթարկվելը, սրբապղծությունն ու աստվածամարտությունը, որոնց համար սահմանվում է մահապատիժ: Թագավորին և իշխանաց իշխանին էր պատկանում մահվան դատավճռի իրավունքը: Իշխաններն իրավունք ունեին մահապատժի վճիռ արձակել միայն այն դեպքերում, երբ ստանում էին թագավորի ուղղակի լիազորությունը կամ գործում՝ որպես նրա փոխանորդ: Բայց նման իրավասությամբ օժտված էին միայն արքայատոհմի իշխանները. «Օրինական չէ, որ ամեն իշխան սպանելու իրավունք ունենա, դա թույլատրելի է միայն թագավորական հարստությանը պատկանող իշխաններին» [42]:

Մեծ իշխանի դատարանը փոխարինում էր թագավորի դատարանին՝ օժանդակելով վերջինի գործունեությանը: Մեծ իշխանի դատարանը ևս **առաջին ատյան** էր՝ ծանր հանցագործություններ քննելիս և **երկրորդ ատյան**՝ ստորին դատարանների նկատմամբ: Իշխանական դատարանները քննում էին գողության, կողոպուտի, խարդախության, մարմնական վնասվածք հասցնելու և այլ բնույթի քրեական գործեր [43]:

Միսի արքեպիսկոպոսի դատարանն առաջին ատյան էր օտարերկրացիների և հայերի միջև ծագած քաղաքացիական գործերի համար: Ա. Սուքիասյանի կարծիքով՝ «Շովային տրանսպորտում հայերի և օտարերկրացիների միջև ծագած վեճերը, որոնք ենթակա չէին արքեպիսկոպոսի դատարանի իրավասությանը, քննում էին դքսի (դուկի) (curia ducalis) դատարանը և պալլի դատարանը (bailia regis)» [44]:

Բարոնի (պարոնի) կամ մարզային դատարանը քննում էր քրեական այն գործերը, որոնք ծագում էին բարոնության սահմաններում: Այն առաջին ատյանի դատարան էր տվյալ բարոնության ավատատերերի համար: Մարզային դատարանները քննում էին քաղաքացիական գործեր, այդ թվում՝ հայրենակալվածքներին վերաբերող գործերը:

Քաղաքային դատարանները (բուրջեաները) տեղական դատարաններ էին, որոնք քննում էին քաղաքաբնակների քաղաքացիական վեճերը և մանր հանցագործությունների վերաբերյալ գործերը՝ բացառելով ազնվականներին, որոնց գործերն անցնում էին մարզային դատարաններ: Ճորտ գյուղացիներին իրավունք ունեին դատել նրանց տերերը, ովքեր իրավասու էին մեղավորներին մարմնական պատիժների ենթարկել և արտաքսել:

Այդպիսով՝ թագավորի դատական իրավասությունը տարածվում էր Կիլիկյան Հայաստանի ողջ բնակչության վրա՝ անկախ ազգային և կրոնադավանական պատկանելությունից: Թագավորական դատարանին ենթակա էին ոչ միայն երկրի հպատակ մահմեդականներն ու ֆրանկները, այլև իտալական քաղաքներից եկած առևտրականները: Վերջիններս

ստանում էին մենաշնորհային առևտրի արտոնագրեր, ունեին որոշակի ինքնավար իրավունքներ, իսկ եթե ծանր հանցագործություններ էին կատարում, ենթակա էին թագավորական դատարանին: Հայերի և օտարերկրացիների միջև ծագած վիճելի գործերը նույնպես քննվում էին հայկական դատարաններում:

Եկեղեցական-հոգևոր դատարաններն են. ա) կաթողիկոսի դատարան, բ) եպիսկոպոսի դատարան, գ) վարդապետի դատարան, դ) քահանայի դատարան:

Եթե աշխարհիկ դատարանները կայացնում են դատավճիռ, ապա հոգևոր դատարանները՝ կանոնական վճիռներ: Եկեղեցական դատավարությունը օժանդակում է աշխարհիկ դատարանին և վերջինի լրացումն է: Եկեղեցական դատարաններն իրենց կանոնական կամ կարգապահական միջոցները կիրառում էին այն ժամանակ, երբ աշխարհիկ դատարանները չէին կիրառում պատիժներ:

Ըստ «Դատաստանագրքի»՝ եկեղեցական դատարաններն իրավասու են քննել.

- Պաշտամունքի հարցերի և հոգևոր անձանց միջև ծագած վեճերի վերաբերյալ գործերը: Հոգևորականների վերաբերյալ քրեական գործերը (սպանություն, գողություն, ապօրինի եկեղեցաշինություն և այլն) ենթակա են աշխարհիկ դատաստանին [45]: Պատժվում են նաև մեղավորների հանցակիցները:
- Հայրապետի և եպիսկոպոսների դեմ ըմբոստանալու կամ նրանց անարգելու վերաբերյալ գործերը [46]:
- Հիվանդանոցների վրա ապօրինի հարկեր դնելու վերաբերյալ գործերը, քանզի օրենքը պատվիրում է. «Որտեղ էլ հիվանդանոցը լինի, բոլորովին չի թույլատրվում այնտեղից հարկ վերցնել. ո՛չ հիվանդից, ո՛չ նրան սպասարկող մարդուց, հակառակ դեպքում՝ դա կհամարվի Քրիստոսին կողոպտել» [47]:
- Հոգևոր-բարոյական նորմեր խախտած անձանց ամուսնալուծական գործերը. այս կատեգորիայի գործերը, որոնք քրեական կամ քաղաքացիական բնույթի էին, ըստ Մմբատի, ամբողջությամբ ենթարկվում էին աշխարհիկ դատարանին, մինչդեռ ըստ Գոշի՝ դրանք նույնպես ենթակա էին եկեղեցու իրավագործությանը [48]:
- Այն հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը, որոնք չեն սպառնում պետական անվտանգությանը, բայց պահանջում են կարգապահական և ուղղիչ միջոցների կիրառում: Այսպիսի դեպքերում մեծ նշանակություն ունեն եկեղեցու հեղինակու-

թյունը: Հատկանշական է, որ հանցագործությունները կանխարգելելու նպատակով՝ հոգևորականները խոստովանության ժամանակ իրավունք ունենին մերկացնել դեռևս գործողության չվերածված գաղտնի մտադրությունները:

- Անզգուշության կամ հոգեկան խանգարման հետևանքով, ինչպես նաև ինքնապաշտպանության համար կատարված ոչ դիտավորյալ սպանությունները, որոնց համար նախատեսվում է ոչ թե քրեական պատիժ, այլ ապաշխարանք [49]:
- Եկեղեցական դատավարությանը ենթակա է այն հանցագործը, ով գղջում է, և պատիժը փոխարինվում է ուղղիչ միջոցներով:

Այդպիսով՝ պետական դատարանների իրավասության ներքո են քրեորեն պատժելի հանցագործությունները, իսկ եկեղեցական դատարանին վերապահվում է ուղղիչ-դաստիարակչական գործառույթ:

Եզրակացություն

XII–XIII դարերում հայ ժողովրդի իրավագիտակցության մակարդակն այնքան բարձր էր, որ ըմբռնել է ազգային աշխարհիկ-քաղաքական օրենքների անհրաժեշտությունը՝ կարգավորելու հասարակական-քաղաքական հարաբերությունները և ապահովելու ազգային դատավարական ինքնությունը: Այս նպատակով՝ Գոշի «Դատաստանագիրքը» կազմվել է որպես հայկական ապագա պետության օրենսգիրք, որի պետաիրավական սահմանադրություններով կանխատեսվում էին ինքնիշխան թագավորության վերականգնում, ազգային ինքնակառավարման իրավունքի ամրագրում, միասնական համապետական օրենսդրության հաստատում: Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը» Կիլիկյան Հայաստանում գործող օրենսգիրք էր, որով լուծվում էին ներպետական հիմնախնդիրները:

Ընդունելով իշխանությունների բաժանման սկզբունքը՝ և՛ Գոշը, և՛ Սմբատը տարանջատում են աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների իրավագործությունն ու գործառույթները: Օրենսդրական և վարչական գործառույթները վերապահված են աշխարհիկ իշխանություններին: Եկեղեցական օրենքները կոչված էին ամրապնդել Հայ եկեղեցու իրավագործությունը, բարձրացնել նրա հեղինակությունն ու դերը երկրի կառավարման, հասարակության մեջ բարոյական սկզբունքների արմատավորման և ազգային միասնության հաստատման գործում: Պետության և Հայ եկեղեցու՝ որպես իրավական պետության հիմնարար սյունների երկմիասնությունն այն գործոնն է, որով երաշխավորվում է պետություն-եկեղեցի-ժողովուրդ հարաբերությունների կայունությունը:

Ելնելով կառավարման կենտրոնացման և տեղական մարմինների հարաբերական ապակենտրոնացման սկզբունքներից՝ օրենսգետները հստակ սահմանում են կենտրոնական և տեղական իշխանությունների իրավունքները՝ կենտրոնական պետական իշխանության գերակայությամբ: Հանուն սոցիալական ներդաշնակության հաստատման՝ դատաստանագրքերում ամրագրված են սոցիալական տարբեր դասերի իրավակարգավորման սկզբունքները, իրավունքներն ու պարտականությունները:

Արդիական նշանակություն ունեն Գոշի և Սմբատի առաջադրած բազմաստիճան դատական համակարգը և աշխարհիկ ու հոգևոր դատական աստիճանների գործառույթների տարանջատումը: Օրենսգետների հայեցակարգերում առանցքային են դատելու ազգային իրավունքի, դատավարական ինքնության, արդարադատության, սահմանված օրենքների պարտադիր կիրառման, հանցագործությունների կանխարգելման, հանցագործներին դատախարակելու և պատժելու գաղափարները:

Եթե պետականության բացակայության պայմաններում Մխիթար Գոշը կարևորում է Հայ եկեղեցու դերը կառավարման ու դատական գործընթացներում՝ շեշտելով թագավորական և եկեղեցական իշխանությունների միջև ներդաշնակության սկզբունքը, մարդու և ազգային իրավունքների իրացումը հպատակության կարգավիճակում, ապա Սմբատ Սպարապետը տվյալ պատմաշրջանում առաջնային է համարում պետության գերակայությունը, պետական շահերի պաշտպանությունը, Կիլիկյան Հայաստանի անվտանգությունը՝ տարածաշրջանի ռազմաքաղաքական ու դիվանագիտական բարդ հարաբերություններում: Միաժամանակ նա գնահատում է Հայ եկեղեցու՝ որպես պետության գլխավոր հենարանի դերը՝ օրենքով հաստատելով հայադավանության անխախտելիությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015թ. խմբագրությամբ), Եր., 2016, Հոդ. 4: էջ 14:
2. Ղահրամանյան Կ. Հայ էթնոսի պատմական առաքելությունը, Եր., 2012, էջ. 35, 47–48:
3. Մովսիսյան Ա. Հնագույն պետությունը Հայաստանում, Եր., 1992, էջ 53:
4. Мирумян К.А. История политической науки. Часть II. Средневековье. Возрождение. Реформация. Ер., 2005. С. 306.
5. Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոցը» // Ռ. Ավագյան. Հայ իրավական մտքի գանձարան, Գիրք 1, Եր., 2001, Հոդ. 2: էջ 392:
6. Նույն տեղում, էջ 399:
7. Նույն տեղում, էջ 392:
8. Նույն տեղում:
9. Նույն տեղում, հոդ. 2, էջ 393: Տես նաև՝ Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի /Աշխատ.՝ Խ. Թորոսյանի, Եր., 1975, Գլ. Բ, էջ 29:

10. *Կիրակոս Գանձակեցի*, Հայոց պատմություն / Գրաբարից թարգմ., առաջ. և ծանոթ.՝ Վ. Առաքելյանի, Եր., 1982, էջ. 122–123:
11. *Մխիթար Գոշի* «Դատաստանագիրք Հայոցը» // Ավագյան Ռ., Հայ իրավական մտքի գանձարան, Գիրք 1, Եր., 2001: էջ. 393–394:
12. Հայոց նոր վկաները /Աշխատ.՝ Հ. Մանանդյանի և Հ. Աճառյանի, Վաղարշապատ, 1903, էջ 24:
13. *Մխիթար Գոշի* «Դատաստանագիրք Հայոցը», հոդ. 50 // Ռ. Ավագյան. Հայ իրավական մտքի գանձարան, Գիրք 1, Եր., 2001: էջ 419:
14. Նույն տեղում, հոդ. 230, էջ 515:
15. *Մարվազյան Լ.* Հայ եկեղեցու ինքնիշխանության հիմքերի խնդիրը Մաղաքիա Օրմանյանի ուսմունքում // «Вестник РАУ (сер.: гуманитарные и общественные науки)». Եր., Изд. РАУ, 2008, N1. էջ 71:
16. *Մամուրեան Ս.* Ազգային վիճակ. Ա. Հայ Եկեղեցի, Ծանոթ. 1 // Արեւելեան Մամուլ, Զմյուռնիա, 1899, Թիւ 4, էջ 135:
17. *Մխիթար Գոշ*, Գիրք Դատաստանի // Ռ. Ավագյան. Հայ իրավական մտքի գանձարան, Գիրք 1, Եր., 2001: Առաջաբան, էջ ԺԶ:
18. *Мирумьян К.А.* История политической науки. Средневековье. Возрождение. Реформация. Часть II, Եր., 2005. СС. 308–310.
19. *Մխիթար Գոշի* «Դատաստանագիրք Հայոցը», հոդ. 157, էջ 460:
20. Տե՛ս *Մարվազյան Լ.*, Խորհրդակցական սկզբունքը Հայ եկեղեցու կառավարման համակարգում, // «Փիլիսոփայությունը արդի աշխարհում», Գիրք IV, Եր., 2014, էջ. 45–48:
21. *Մխիթար Գոշի* «Դատաստանագիրք Հայոցը», հոդ. 161, էջ 462:
22. Նույն տեղում, հոդ. 135, էջ 451:
23. Նույն տեղում, Նախաբան, Գլ. Դ, էջ 367:
24. Նույն տեղում, հոդ. 2, էջ 395:
25. Նույն տեղում, Նախաբան, Գլ. Ժ, էջ 386:
26. Նույն տեղում, հոդ. 1, էջ 390:
27. Նույն տեղում, Նախաբան, Գլ. Ե, էջ 369:
28. Դատաստանագիրք *Սմբատ Բշխանի* (Գունդստաբլի) (Կիլիկյան Դատաստանագիրք XIII դարի) / Ձեռագրերի համեմատ. և առաջ.՝ Ա. Վրդ Դլտձեան, Ս. Էջմիածին, 1918:
29. *Սմբատ Սպարապետի* «Դատաստանագիրքը» // Ռ. Ավագյան. Հայ իրավական մտքի գանձարան, Գիրք 1, Եր., 2001: էջ 563:
30. *Сукиасян А.* История Киликийского Армянского государства и права (XI–XIVвв.). Եր., 1969. С. 198.
31. *Мирумьян К.* История политической науки. Средневековье. Возрождение. Реформация. Часть II, Եր., 2005. С. 334.
32. *Սմբատ Սպարապետի* «Դատաստանագիրքը», Նախաբան // Ռ. Ավագյան. Հայ իրավական մտքի գանձարան, Գիրք 1, Եր., 2001: էջ 563:
33. Նույն տեղում, հոդ. 76, էջ. 600–601:
34. Նույն տեղում, հոդ. 1, էջ 564:
35. Նույն տեղում, հոդ. 2, էջ 568:
36. Նույն տեղում, հոդ. 1, էջ 568:
37. Նույն տեղում, հոդ, 33, էջ 578: Տես նաև՝ հոդ. 34, էջ. 580–583:

38. Նույն տեղում, հոդ. 17, էջ. 572–573:
39. *Мирумян К.* История политической науки. Средневековье. Возрождение. Реформация. Часть II, Ер., 2005. С. 336.
40. *Մարվազյան Լ.* Դատական համակարգը և դատավարության սկզբունքները Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքում» // Փիլիսոփայությունը արդի աշխարհում, Գիրք 9, Եր., 2019: էջ 93:
41. *Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը»* // Ռ. Ավագյան. Հայ իրավական մտքի գանձարան, Հոդ.76, Եր., 2001: էջ. 601:
42. Նույն տեղում, հոդ. 1, էջ 565:
43. Տե՛ս՝ նույն տեղում, հոդ. 13, 128, 152, 156, 161, 166, 167:
44. *Сукиасян А.* История Киликийского Армянского государства и права (XI–XIVвв.), Ер., 1969. С. 308.
45. Տե՛ս *Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը»*: Հոդ. 11–13 // Ավագյան Ռ., Հայ իրավական մտքի գանձարան, էջ. 571–572:
46. Տե՛ս՝ նույն տեղում, հոդ. 14, էջ 572, հոդ 24, էջ 575:
47. Տե՛ս՝ նույն տեղում, հոդ. 44, էջ 586:
48. Տե՛ս՝ նույն տեղում, հոդ. 100, 101, 104, 162:
49. Տե՛ս՝ նույն տեղում, հոդ. 22, 163, 180–181, 192, 196:

REFERENCES

1. Constitution of the Republic of Armenia (2015 edition), Yer., 2016, Art. 4. P. 14.
2. *Ghahramanyan K.* The Historical Mission of the Armenian Ethnocentrism, Yer., 2012. PP. 35, 47–48.
3. *Movsisyan A.* The Ancient State in Armenia, Yer., 1992. P. 53.
4. *Mirumyan K.* History of political science. Part II. Middle Ages. Revival. Reformation. Yer., 2005. P. 306.
5. Mkhitar Gosh's "Girq datastani" // R. Avagyan. Treasury of Armenian Legal Thought, Book 1, Yer., 2001, Art. 2. P. 392.
6. Ibid. P. 399.
7. Ibid. P. 392.
8. Ibid.
9. Ibid., art. 2. P. 393; Mkhitar Gosh, Book of Judgment /Work: Kh. Torosyan, Yer., 1975, Ch. B, P. 29.
10. *Kirakos Gandzaketsi.* History of Armenia /translated from Grabar, preface and introduction by V. Arakelyan, Yer., 1982. PP. 122–123.
11. Mkhitar Gosh's "Girq datastani" // R. Avagyan. Treasury of Armenian Legal Thought, Book 1, Art. 2, Yer., 2001, PP. 393– 394.
12. New Armenian Witnesses /Work: H. Manandyan and H. Acharyan, Vagharshapat, 1903. P. 24.
13. Mkhitar Gosh's "Girq datastani" // R. Avagyan. Treasury of Armenian Legal Thought, Book 1, Art. 2, Yer., 2001, P. 419.
14. Ibid. P. 515.
15. *Sarvazyan L.* The problem of the foundations of the sovereignty of the Armenian Church in the teachings of Maghakia Ormanyan // "Vestnik RAU (series: humanitarian and social sciences)". Yer., RAU Publishing House, 2008, No. 1. P. 71.
16. *Mamourian M.* National situation. Armenian Apostolic Church, Note 1 // "Arevelyan Mamul", Smyrna, 1899, No. 4. P. 135.

17. Mkhitar Gosh's "Girq datastani" // R. Avagyan. Treasury of Armenian Legal Thought, Book 1, Art. 2, Yer., 2001. Foreword, P. ZHZ.
18. *Mirumyan K.* History of political science. Middle Ages. Revival. Reformation. Part II, Yer., 2005. PP. 308–310.
19. Mkhitar Gosh's "Datastanagirq hayoc", article 157. P. 460.
20. *Sarvazyan L.* The consultative principle in the governance system of the Armenian Church, // "Philosophy in the Modern World", Book IV, Yer., 2014. PP. 45–48.
21. Mkhitar Gosh's "Datastanagirq hayoc", article 161. P. 462.
22. Ibid. Article 135. P. 451.
23. Ibid. Foreword, Chapter D.P. 367.
24. Ibid. Article 2. P. 395.
25. Ibid. Foreword, Chapter Zh. P. 386.
26. Ibid. Article 1. P. 390.
27. Ibid. Foreword, Chapter E.P. 369.
28. Datastanagirq of Smbat Ishkhan (Gundstable) (Cilician Chronicle of the 13th century) / Compared with manuscripts. and before: A. Vrd Ghltjian, Holy Etchmiadzin, 1918.
29. Smbat Sparapet's "Datastanagirq" // R. Avagyan. Treasury of Armenian Legal Thought, Book 1, Yer., 2001. P. 563.
30. *Sukiasyan A.* History of the Cilician Armenian State and Law (11th–14th centuries). Yer., 1969. P. 198.
31. *Mirumyan K.* History of political science. Middle Ages. Revival. Reformation. Part II, Yerevan, 2005. PP. 308–310.
32. Smbat Sparapet's "Datastanagirq", Prologue // R. Avagyan. Treasury of Armenian Legal Thought, Book 1, Yer., 2001, P. 563.
33. Ibid. Art. 76. PP. 600–601.
34. Ibid. Art. 1. P. 564.
35. Ibid. Art. 2. P. 568.
36. Ibid. Art. 1. P. 564.
37. Ibid. Art. 33, P. 578; Art. 34. PP. 580–583.
38. Ibid. Art. 17. PP. 572–573.
39. *Mirumyan K.* History of political science. Middle Ages. Revival. Reformation. Part II, Yerevan, 2005. P. 336.
40. *Sarvazyan L.* The Judicial System and the Principles of Trial Procedure in Smbat Sparapet's "Book of Courts" // Philosophy in the Modern World, Book 9, Yer., 2019. P 93.
41. Smbat Sparapet's "Datastanagirq", Art. 76. // R. Avagyan. Treasury of Armenian Legal Thought, Book 1, Yer., 2001. P. 601.
42. Ibid. Art. 1. P. 565.
43. Ibid. Art. 13, 128, 152, 156, 161, 166, 167.
44. *Sukiasyan A.* History of the Cilician Armenian State and Law (11th–14th centuries). Yer., 1969. P. 308.
45. Smbat Sparapet's "Datastanagirq", Art. 11–13 // R. Avagyan. Treasury of Armenian Legal Thought, Book 1, Yer., 2001. PP. 571–572.
46. Ibid, Art. 14. P. 572; Art. 24. P. 575.
47. Ibid, Art. 44. P. 586.
48. Ibid, Art. 100, 101, 104, 162.
49. Ibid, Art. 22, 163, 180, 181, 192, 196:

ПРИНЦИП РАЗДЕЛЕНИЯ ВЛАСТЕЙ В «СУДЕБНИКАХ» МХИТАРА ГОША И СМБАТА СПАРАПЕТА

Л.С. Сарвазян

*Институт философии, социологии и права НАН РА
Российско-Армянский университет*

АННОТАЦИЯ

В данной статье интерпретируется принцип разделения властей в двух важнейших источниках средневекового армянского права. Выдающиеся армянские мыслители Мхитар Гош и Смбат Спарапет в своих главных работах – в «Судебниках» разработали уникальную концепцию национального и государственного суверенитета, которая соответствовала национальной идеологии армянского народа и требованиям национально-освободительной борьбы в целях восстановления политической независимости и суверенной государственности. В этом контексте армянские мыслители обсуждали принцип разделения властей на нескольких уровнях, определяя права и обязанности духовной и светской власти, а также различных социальных групп в системе государственного управления. Их целью была государственная безопасность, национальное единство и социальная гармония. Реализация этой цели считалась возможной путем применения к деятельности органов государственной власти конституционно-правовых принципов представительства, совещательного правления, законности, легитимности, справедливости, взаимного согласия народа и власти. Важность и значение этих принципов в армянском обществе была осознана еще в раннем Средневековье и реализовывалась в Национально-церковных собраниях.

Создание «Судебников» было обусловлено историческими, правовыми и политическими реалиями XII–XIII веков. В Армении и Киликии армянский народ вел национально-освободительную борьбу за восстановление политической независимости и национальной государственности. Поэтому «Судебник» Гоша была составлена как кодекс будущего Армянского государства, а «Судебник» Смбата – как действующий кодекс уже сложившегося государства Киликийской Армении. «Судебники» основаны на отношениях между государством, церковью и народом. Многие законы отражают способы управления светскими и духовными властями, а также правовое урегулирование отношений между правительством и народом. Оставаясь верными системе ценностей национальной правовой и политической культуры, Мхитар Гош и Смбат Спарапет также закрепили в «Судебниках» принципы многоуровневой судебной системы во имя утверждения национальной судебной идентичности и справедливости.

Ключевые слова: принцип разделения властей, национальная политическая система, Мхитар Гош, «Армянский Судебник», политическое самоопределение, Смбат Спарапет, конституционная монархия, правосудие.

**THE PRINCIPLE OF SEPARATION OF POWERS
IN THE “LAWCODES” OF MKHITAR GOSH
AND SMBAT GUNDSTABLE**

L. Sarvazyan

*Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA
Russian-Armenian University*

ABSTRACT

The article interprets the principle of separation of powers in two major sources of medieval Armenian law. Outstanding Armenian thinkers Mkhitar Gosh and Smbat Sparapet in their main works – in the “Codes of Laws” – developed a unique concept of national and state sovereignty, which corresponded to the national ideology of the Armenian people and the demands of the national liberation struggle for the purpose of restoring political independence and sovereign statehood. In this context, Armenian thinkers discussed the principle of separation of powers at several levels, defining the rights, obligations and liabilities of spiritual and secular authorities, as well as various social groups in the system of national government. Their goal was state security, national unity and social harmony. The achievement of this goal was considered possible through the application to the activities of state authorities of the constitutional and legal principles of representation, advisory government, legality, legitimacy, justice, and mutual consent of the people and the authorities. The importance and importance of these principles in the Armenian society was recognized even in the early Middle Ages and was realized in the National-Church Assemblies. The creation of “Codes of Laws” were conditioned by historical, legal and political realities of the XII–XIII centuries. In Armenia and Cilicia, the Armenian people waged a national liberation struggle to restore political independence and national statehood. Therefore, Gosh’s «Lawcodes» was compiled as the code of the future Armenian state, and Smbat’s «Lawcodes» was compiled as the current code of the already established state of Cilician Armenia. The “Codes of Laws” are based on the relationship between the state, the church and the people. Many laws reflect the methods of governance of secular and spiritual authorities, as well as the legal regulation of relations between the government and the people. Remaining true to the value system of the national legal and political culture, Mkhitar Gosh and Smbat Sparapet also enshrined in the “Codes of Laws” the principles of a multi-level judicial system in the name of affirming national judicial identity and justice.

Keywords: principle of separation of powers, national political system, Mkhitar Gosh, “Armenian “Lawcodes”, political self-determination, Smbat Gundstable, constitutional monarchy, justice.